# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ Ու Մ N 43-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԲԻԿ ՍԻՍԱԿԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Վայք քաղաքի բնակիչ Ռուբիկ Սիսակի Ավագյանի /ծնված՝ 1957թ./ սեփականություն համարվող, Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը, համարել օրինական և հասցեավորել Վայք համայնք, Վայք քաղաք, 26 կոմիսարների փողոց, 2 բնակելի տուն:
2. Բնակելի տունը կառուցվել է մինչև 2001թ.:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.06019 հա հողամասը (ծածկագիր՝ 10-003-0009-0014) չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 44-Ա

## ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ ՆԳՆ Ոստիկանության քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքային ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*16 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 45-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.12.2023Թ-Ի ԹԻՎ 274-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ն մասի 1-ին կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 21.12.2023 թվականի թիվ 274-Ա «Ռուբիկ Իխտիարյանին պատկանող հողամասից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

1.1 Որոշման հղման մեջ չակերտներում գրված «Ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» բառերը փոխարինել «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» բառերով, այնուհետև ինչպես տեքստում:

1.2 Որոշման բովանդակության առաջին կետում «ավել օգտագործվող» բառերից հետո ավելացնել «Վայք համայնք, Մարտիրոս բնակավայր, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 10/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային
նշանակության, 2023KQXAJA չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրով» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*16 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 46-Ա

### ՄԱՆԻՇ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանիշ Հունանյանի դիմումը և «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002թվականի դեկտեմբերի 26-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որը նրանց պատկանող հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցուցակում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության , ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքը և չի առաջացնում սերվիտուտ,

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Ճանաչել Մանիշ Հայրապետի Հունանյանի /ծնված 1932թ./ սեփականության իրավունքը ըստ քարտեզագրման արդյունքների 0.07663 հա ընդհանուր մակերեսով ավել օգտագործվող, Վայք համայնքի Հերհեր բնակավայրի 20-րդ փողոց, տուն 3 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, 10-028-0039-0002 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 47-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 5,9000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Ձառիթափ բնակավայրում գտնվող 5,9000 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-022-0238-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024RSY4EC:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*19 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 48-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,12079 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1.Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Զառիթափ բնակավայրում գտնվող 0,12079 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 10-022-0237-0000 կադաստրային ծածկագրով հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024G23MXS:
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 49-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 51/15 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 55.1 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,00332 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Լուսինե Արշավիրի Աբրահամյանին ՝ շինության համար՝ 78 350 /55.1 x 1422/ (յոթանասունութ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 62 340 /33.2x1877.7/վաթսուներկու հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ արժեքով:
2.Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 50-Ա

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնով և ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 462 -Նորոշումներն ուժը կորցրած ճանաչելու եվ 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1023-Ն որոշմամբ սահմանված գործակիցները՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի, 15/11 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող շինությունը 74.1 քմ ընդհանուր մակերեսով՝ զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0,00485 հա մակերեսով հողատարածքով, գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով վաճառել քաղ. Էդգար Հրայրի Վարդանյանին ՝ շինության համար՝ 105 370 /74.1 x 1422/ (մեկ հարյուր հինգ հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 91 070 /48.5x1877.7/(իննսունմեկ հազար յոթանասուն) ՀՀ դրամ արժեքով:
2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*23 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 51-Ա

### ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԻ ՏԱՂԱՎԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2001թ. սեպտեմբերի 24-ի թիվ 896 որոշմամբ հաստատված «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգով», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, հիմք ընդունելով նաև քաղաքացի Գ.Գևորգյանի դիմումը (մտից՝ Գ-8).

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Վայք համայնք բնակիչ Գոռ Արարատի Գևորգյանին (ծնված՝ 12.07.1985թ., ՆՔ՝ 003930971) Վայք քաղաքի Շահումյան 104 բնակ. շենքի հարակից տարածքում տեղադրել ժամանակավոր առևտրի կրպակ:
2. Նոր ժամանակավոր առևտրի կրպակը տեղադրել հողի մակերեսին, ըստ սույն որոշման անբաժանելի մասը կազմող հողամասի հատակագծի՝ 19.2քմ մակերեսով՝ 1/մեկ/ տարի ժամկետով:
2. Ժամանակավոր առևտրի տաղավարը պետք է լինի հանելու կամ տեղափոխելու համար ապամոնտաժվող տարրերից հավաքվող կամ տարածական կայունություն ունեցող ամբողջական միավոր՝ բացառելով շինարարական աշխատանքներում թաց պրոցեսը:
3. Ժամանակավոր առևտրի տաղավարը հանելու կամ տեղափոխելու դեպքում պետք է վերականգնվի հողի մակերևույթը, դրա բարեկարգման ծածկույթը՝ տաղավարի սեփականատիրոջ ծախսերով:
4. Ժամանակավոր առևտրի տաղավարի տեղադրման դեպքում կարող են կատարվել տեղանքին կապելու, հողին ժամանակավորապես ամրացնելու աշխատանքներ՝ մասնավորապես տեղադրման հորիզոնական հարթակի ստեղծում, շինության խարսխակապում:
5. Պարտավորեցնել քաղ. Գոռ Գևորգյանին՝ տաղավարի և շենքի մուտքի միջակայքում կատարելու բարեկարգման, ինչպես նաև լուսավորման աշխատանքներ:
6. Սահմանել ժամանակավոր տաղավարի զբաղեցրած հողատարածքի տարեկան վարձավճարը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2025թ.-ի փետրվարի 23-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ